


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մճ.
Գաւառացի 10 Մճ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 Մճ.
Գաւառացի 5 Մճ.
Օտար երկիրներու 50 Պր.
Շահույցման առողջ մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. ուսերի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրատանշիւր թիւ 2 զընդ թուղթ .



ԼՐԱՊԵՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արքայ խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագր-
— ճանրելին պիտի ուղարկուի Գաւառ-
թիւ Սահմանադրար Հաստիսի թիւ
198 : Եւրո խան, Մատիսի գրասեն-
եակը :
Հանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Ձտուած նամակի յողում, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հիւսիսեան խնդիրը տակաւին
առ կախ կը մնայ, և կըսուէր թէ Բը-
րէվէլայի բանակցութիւնները իրզ-
ւելու վրայ են : Լրագրաց մէջ այս
խնդիրը բաւական վիճաբանութեան
նիւթ եղած է և ճշտաւ կ'առաջարկէր
որ Կ. Պոլսոյ մէջ դեպքանխորհուրդ-
մը կազմուի թէ՛ այս և թէ՛ Սիւլիսթի
կողմէն Պոլսոյ վրայ և Տօլուսթի
սահմանին՝ այն և Արապ-Թապիայի
խնդիրը լուծելու համար : Ռուսիոյ
նոր շրջաբերականն, որով տեղութեանց
ուշադրութիւնը կը հրաւիրէր Պալ-
քաններու խնդրոյն և Արեւելեան Բու-
մէյի ապագայ վարչութեան վրայ,
դեպքանխորհուրդի դադարեալին ա-
ւելի կարեւորութիւն տուաւ : Սակայն
չորեքշաբթի օրն Անտաշի կոմսը Բէշ-
թայի մէջ ելուածից մասնախորհուրդին
առջև տեսնախորհուրդ ըստ թէ Պէր-
լինի մէջ դեպքանխորհուրդ մը կազ-
մելու առաջարկութիւն չէ եղած : Արդ-
եօք Պէրլինի մէջ չպիտի լինի և ու-
րիշ քաղաք մը պիտի կրնայ գումա-
րի դեպքանխորհուրդն : Այս կէտը
տակաւին կրնայ հաւանական համար-
ուիլ ներկայ խնդրոյ սմանց կարեւո-
րութեան նայելով : Իսկ Ռուսական
շրջաբերականին յարուցած Պալքանի
խնդրոյն դադար, Անտաշի կոմսին ա-
տենաբանութեան մէջ լուծում մը կը
դանենք, քան զի կրնէ թէ Պոլսոյ
ընդերքէն կրնանք կը պահանջեն
իրենց պաշտպանողական գործին ա-
մբողջական համար : Բայց այս խնդիրը
սահմանները դժեւոր պաշտօն ունե-
ցող յանձնախորհուրդին յանձնուած է :
Պոլսոյն եւ իրենց պաշտպանութեան
արդէն պատրաստութիւններ առած-
են Պալքանները ձեռքէ չհանելու, և
կիրճերն ամրացնելով խոշոր թիւղանթ-
ներ դրած և ապրանքները լըցու-
ցած են : Պէրլինի դաշնագրութեան
վրայ դեռ տարի մը չանցած՝ անոր
կարեւոր մէկ կէտն այսպէս բարորդին
յեղաշարժում է : Լորս Պրօքսիմիլա
քանիցս յայտարարեց թէ Օսմանեան
գործը Պալքաններն ամրացնելով Կ.
Պոլսոյ պիտի ստահուէ. սակայն այ-
ժմ իրողութիւնն այնպէս կը բերէ
որ Պալքաններն ոչ թէ Օսմանեան
կայսրութեան՝ այլ Պոլսոյ պատ-
նէշ կը լինին : Նոյնիք Անդղիոյ ճար-
տարախօս առաջին նախարարն ինչ-
պէս պիտի մեկնէ այժմ իւր առաջնա-
յայտարարութիւնները :

Կարելի է սակայն որ Անդղիոյ աշ-
խարհավարութեան մէջ փոփոխու-
թիւն մտած լինի, որոյ նշան կը հա-
մարուէր Բեքրապուրի և Կ. Պոլսոյ
դեպքանայ փոփոխութիւնն : Երբ
Անդղիոյ նախարարը ջերմ պաշտպան

կը կանգնէին թուրքիոյ իրաւացի, կը
յուսային կամ կերակայէին թէ յու-
նիս 4 ի պայմանագրութեան համա-
մատ փոքր-Ասիոյ վրայ պաշտպանու-
թիւն պիտի բանեցնեն և թուրքիա
կերպիւ իմն իրենց խնամակալութեան
ներքեւ պիտի մտնէ : Ռուսիոյ շատ
մ'առաջարկութիւններ և լրագրաց
մէջ յօդուածներ տեսնուեցան այս
խնդրոյն վրայ, որք դրեմէ թուր-
քիոյ Ասիական գաւառները իրիտա-
նական գաղթականութիւն դարձած
կը ցուցնէին : Անդղիացիներէն ոտու-
կանութեան հրամանատարներ, դա-
տարանայ անգամներ և ելուածից
պաշտօնատարներ (տէֆթէրար) պի-
տի կարողութիւն : Երեւակոյութիւնը
չափ չունենալով՝ մինչև իսկ կըսուէր
թէ Անդղիա կը պահանջէ որ թուր-
քիոյ ելուածից, պատերազմի և ծո-
ղային գործոց նախարարներն Անդ-
ղիացի լինին : Լորս Սալիսթրիի ֆո-
քըր Ասիոյ բարեկարգմանց վրայ դը-
րած երկարածիք նախկինը տակա-
ւին մտաւորած չեն : Բայց ինչ եղաւ
այսչափ բանակայութեան և գրու-
թեանց արդիւնքը. — դրս. և Սըր
Լէյարտ իւր բոլոր չափազանց եռան-
դեամբն իսկ չկրցաւ տեղեկութիւն
ունենալ Պ. Տը Թօքլիլի ձեռամբ
կրքեալ ելուածական պայմանագրու-
թիւններէն, և գրեթէ սիրաբ կոտ-
րած մեկնեցաւ Կ. Պոլսէն :

Բայց Անդղիա իւր առաջարկու-
թեանց և աշխարհադարձութեան այս-
չափ անյաշոյ կենդան չէր կրնար
հանդուրժել, և արդէն բաւական
ներողամտութիւն ցոյց տուաւ : Ռու-
սի հաւանական է որ ինք ևս ընթաց-
քի փոփոխութեամբ մը պատասխանէ.
նախ Արեւելեան Բումէյի ելուածական
յանձնախորհուրդին անգամ՝ Սըր Ռօլֆ
Պոլսոյ քաղաք նպատակաւ տեղեկագը-
րեր զրկեց, և թրնոյթի մէջ Պալ-
քարիոյ խորհուրդանին բացման օրը
արուած կոչուեցին մէջ անդղիական
պատուիրակին իւր ելուածից պաշտ-
նակիցներուն կենացը բաժակ առա-
ջարկելով բարի դալուստ մաղթեց
Պոլսոյ վրայ, որ « Եւրոպական պե-
տութեանց վերջին ծննդն է », և
սա և յարեց, « Վերջին ծննդն է »
նէ առ այժմ : Այս խօսքը՝ որ կը
նշանակէ թէ Պոլսոյ տակաւին
կրնայ մեծնալ, Անդղիացի պաշտ-
նատարի մը բերնին մէջ նշանակու-
թեան արժանի է : Արդարեւ, ապա-
դայն իմաստնայ աշխատող և քա-
ղաքակրթութեան շաղկին մէջ յա-
ռաջդ իմնուցէ, և այս փաստին լին-
լով Մէսէնճըր լրագրողը կը պատաս-
խանէ Հօպարթ փաշային, որոյ հրա-
տարարած մէկ նամակաւ Յուստատա-
նի իրաւունքը թիտուած է : Մէսէն-
ճըր վիճակագրական հաշիւ մը կը
ցուցնէ և կրնէ թէ վերջին պատե-
րադմէն առաջ թուրքիոյ տարածու-

թիւն 2,293,000 քառակուսի քիւ-
մէթր, բնակիչները 22 միլիոն և իւր
տարեկան առեւտրական շարժումն
729,031,000 ֆրանք էր, որ իւրաքան-
չիւր քառակուսի քիւմէթրի 318 ֆը-
րանք և իւրաքանչիւր մարդու 23
ֆրանք չափ կ'ընայ : Թուրքիա հինգ
դարէ ի վեր այս երկիրներուն կիշ-
լիս, որ իրիտ բարգաւաճ էին : Իսկ
Հեղինք յիսուս տարիէ ի վեր իրենց
փոքրիկ երկրին տէր եղան որ աւել-
եալ վիճակի մէջ էր : Յունաստանի
տարածութիւնն է 80,123 քառակու-
սի քիւմէթր, բնակիչները 1,600,000
հոգի են և առեւտրական շարժումը
234,477,360 ֆրանք, հետեւեալ Յու-
նաստանի առեւտուրը մէկ քառակու-
սի քիւմէթրի 4678 ֆրանք և մարդ-
դու 146 1/2 ֆրանք կ'ընայ : Ռու-
սի երկիր մը որ աւելի աշխատած է,
վարձը կ'ընդունի : Թէ և այս փաստն
ակադեմիական է, այսու՝ ամենայնիւ
Եւրոպիոյ համակարգութեան միշտ քա-
ղաքակրթութեան յարմար փոփոխու-
թեան է, ասոր տարակոյս չկայ : Անդ-
ղիա թուրքիոյ քաղաքակրթութեան
կը փոփոխի և իւր համակարգութեան
այսչափով չափուած է : Իսկ Ռուսիոյ
դէմ անպատճառ թշնամի չէ, և ա-
սոր ապացոյց կրնայ համարուիլ Բեք-
րապուրիի նոր դեպքան Լորս Տիւ-
ֆթերին՝ իրեն արուած կոչուեցին մէջ
խօսած առեւտրականութեան այն հա-
ւածն, որ դեպքանական պաշտօնին
փոփոխութեան ակնարկելով ըստ թէ
կը յուսայ որ Անդղիոյ պատեւն ու եւ-
րոպիոյ խաղաղութիւնը վստահութեան
արժանի ձեռնայ յանձնուած են :

Օսմանեան փոխառութեան խնդ-
րոյն վրայ Ռուսական դեպքան Լորս
նօֆ իշխանին Բ. Դուռը զրկած ծա-
նուցագիրն երեկ հրատարակեցինք :
Ահա տարի արտաքին գործոց նախա-
րար Գարաթիստարի փաշային կողմ-
նէ զրկուած պատասխանին պատճէնն
ալ :

« Վսեմափայլ Տէր .
« Կը փութամ պատասխանել այն
ծանուցողոյն, զոր ձեր վսեմա-
թիւնը բարեհաճած է ինձ ուղղել
փետր. 16/28 թուականաւ և 250
թուահամարով Բ. Դրան այս օրերս
կըքած երմանական կարգադրութեանց
նկատմամբ :
« Ձեր վսեմութիւնը Պէրլինի վե-
հաժողովին մեծասանեւորդ առե-
նադրութեան մէջ պարունակեալ տը-
րամաբարութիւնները կը յիշէ, որ Օսմ-
անեան իրաւունքն արտաքին ար-
դէն յատկացեալ գրաւներուն առաջ-
նութեան իրաւունքը կը նուիրագոր-
ծէ, և համարում կը յայտնէ թէ սոյն
սիլլան զօրութեամբ Ռուսիա առաջ-
նութեան իրաւունքը պէտք է դու-
րադրէ դեռ չկապուած ուրիշ բոլոր

հաստիքի նկատմամբ : Իրաւունք մը՝
զոր Բ. Դուռն անտես ըրած է եղեր
Պոլսոյ տուրքին պէս նոր հա-
սարկներ յատկացնելով այս օրերս կըն-
քուած երմանական գործողութեան :

« Վերջապէս, Ձեր վսեմութիւնը
պարա կը համարի բոլորքը Անդղիացի
և Գաղղիացի պատուիրակաց Օսման-
եան դանձու ընդհանուր հասու-
թից վրայ իբր թէ հսկողութեան
պաշտօն մը յանձնուած լինելուն դէմ
և կարծիք կը յայտնէ թէ բոլոր շահ-
քն համաձայնեցնելու միակ միջոցը՝
Պէրլինի վեհաժողովին 18 րդ առե-
նագրութեան մէջ նախատեսուած եւ
միտական միջոցը այն յանձնախորհ-
հաստատութիւնը պիտի լինի :

« Նախ, կ'աղաչեմ Ձեր վսեմա-
թեան քաջ համարուիլ թէ Բ. Դուռն
ընդունելով այն երմանական միջոցն-
ըր զոր Ձեր վսեմութիւնը գիտէ, փոքր-
կեան մ'աչքէ չէ կրուած այն իս-
կական կամ բարոյական պարտա-
կանութիւններն որք կրնան իրեն համար
յուսուիլ զայ 1879 յունվար 27ի (փե-
տրվար 8) դաշնագրութեանն, կամ
Պէրլինի վեհաժողովին առեւտրու-
թեանց յայտարարութեանն :

« Պէրլինի վեհաժողովին մեծա-
սանեւորդ առեւտրութեան մէջ ար-
ձանագրուած վիճաբանութեան և
յայտարարութեանց ուշադիր ընթեր-
ցումը կը ներէ հաստատու թէ Բ. Դը-
րան մտքէն անցած չէ երբեք իւր
պարտաւորաց որոշեալ կարգաւ մը
դատարարութեան ստանձնել : Օսմանեան
խաղաղ ընդհակառակն խնամով ըզ-
դուչացան այնպիսի դադարեալ մը,
դիտելով տալով թէ Օսմանեան ելուած-
ալից ներկայ վիճակին մէջ անհնար
էր պետութեան պարտուց գաւառար-
դութիւն մը նշանակել, որոյ մէջ
պատերազմական տուգանքը կարե-
նար տեղի դանել : Այս պատճառաւ
վեհաժողովը բաւական համարեցաւ
Ռուս լրագրաց յայտարարութիւն-
ներն արձանագրել հաստատելով թէ
երմանական խնդրոյ մէջ Ռուսիա պի-
տի յարգել նախկին պարտաւորաց
իրաւունքն, և թէ պատերազմական
տուգանքն ընդհանրապէս պիտի գը-
չէր թուրքիոյ պարտաւորաց չահե-
րուն :

« Ռուսիան, Բ. Դրան կողմէ բնաւ
խոստում մը չկայ ուղղակի կամ ան-
ուղղակի, որ կարող լինի իւր հին և նոր
հասոյթներն իւր ուղածին պէս և պե-
տութեան պիտից պահանջած կեր-
պիւ գործածելու իրաւունքը սեղծել
իրաւունք մը՝ զոր ի գործ դրած ժա-
մանակ իւր պարտաւորաց օրինաւոր
չահերն արդարապէս ի հաշիւ պիտի
առնուի :

« Արդ՝ փետր. 13ին թօքլիլի կար-
գադրութեամբ կըքեալ գործողու-
թեան մէջ՝ Օսմանեան կայսերական
կառավարութիւնն ոչ միայն իւր լի-

տկաւորութիւնը իրաւամբ վարուեցաւ, այլ և այնպիսի պարտականութիւններ յանձն առաւ, որք չեն կրնար երբէք բանաւորապէս քննադատուիլ իւր ոչ գրաւատէր պարտաւորաց և ոչ մէկէն, որովհետեւ այն կարգադրութեանց արդիւնքն է ներքին և արտաքին հասարակային պարտուց դու մարդ մեծապէս նուազեցնել, արտաքին փոխառութեանց կապում ճիշտ հասոյթներուն մէջ մեծ մասն ազատել, և վերջապէս թղթադրամին շնորհիւ յառաջդրելով, անօրէնութիւն մը որ պետութեան երաժշտութեան բարեփոխումն անոր վարկը վերահաստատելու գիտում ունի:

« Չեր վսեմութիւնն արդարեւ բարեհաճած է ճանչել թէ Ռուսիոյ կառավարութիւնն 1879 յունիս 27 ի (8 փետր) դաշնագրութեամբ որոշեալ պատերազմական տուգանք քանի որ Օսմանեան կառավարութեան պարտաւորութիւնն է, երբէք պատճառ չը պիտի ունենար իրաց այս նոր վիճակէն գանգատելու՝ եթէ նոր քննադատէ պարտուց յատկացեալ հասութիւն մէջ դեռ չկատարած հասոյթներ ալ չկենային, ինչպէս Պոլսոյ մարտերէն ըստ այս մասնաւոր գանգառը կ'անհետանայ այն կրկին նշկատարութեան առջև թէ, մէկ կողմէ թուրքիս, ինչպէս վերջ հաստատելի, պետութեան դուրս թիւնն ստահալելու համար իւր հասոյթներն ինք տրամադրելու իրաւունքն երբէք ձեռքէ չէ հանած, և միւս կողմէ՝ Պոլսոյ մարտերէն ստեղծ Պերլին գումարեալ տէրութեանց մարմին մէջ Օսմանեան արժեթղթատարաց արուեստ սահմանեալ էր միշտ, ինչպէս որ կը հասկցուի Պերլինի վեհաժողովին եօթներորդ առեւտրութեան ընթերցանութենէն, և սա իրողութեանէն թէ տէրութեան ընդհանուր հասոյթներն, որոց մէկ մասը կը կազմէ Պոլսոյ մարտերէն, արդէն յայտնապէս կապում էին յերաշխարհութեան սոյն պարտուց, կառնկցեմ թէ Օսմանեան ընդհանուր պարտուց մէջ ինչ անկախ հաստատարակեալ իշխանութեանց բաժնին ինկած մասին դաւով, սոյն տրամադրութեան արտաքայտութիւնն իսկ կը բաւէ ցուցնելու թէ յերաշխարհութեան սոյն պարտուց արժեթղթատարաց պէտք է յատկանայ կատարեալ իրաւամբ:

« Անուղղակի տուրքերը մատուցարարները պաշտօն ունեցող յանձնակալներն գաղով, որոց մէջ Անգղիական և Գաղղիացի երկրներու անդամներն են, իմ պարագայէն սոյն յանձնակալներն իսկական հանգամանքը ճշգրտել Ռուսիոյ կայսերական կառավարութեան աշտոյց առջև, ինչպէս որ Բ. Գուման առիթ ունեցած է արդէն հաստատելու, այս վարչական եղանակը քննադատէ պարտուց արժեթղթատարաց կատարեալ արդարութիւնն տալու համար միայն ընդունուեցաւ, և կայսերական կառավարութեան խորհրդաց վրայ Անգղիոյ և Գաղղիոյ կառավարութեանց կողմէն չորս օտարազգի պաշտօնատար նշանակուիլը չկրնար բնաւ քաղաքական մտահոգութիւններ յարուցանող գործ մը նկատուիլ:

« Գաղղի Պերլինի վեհաժողովին մասնակցող տէրութեանց կողմէ Բ. Գուման յանձնարարեալ միջադէպին յանձնարարութիւն, Չեր վսեմութիւնը չպիտի վարանի ճանչելու թէ այդ յանձնարարութեան կազմելու պէտք չը պիտի մնայ հիմա, որովհետեւ իւր պաշտօնն Օսմանեան պետութեան և անոր ընդհանուր պարտուց արժեթղթատարաց միջև համաձայնութիւն մը գոյացնել պիտի լինէր, և այս փափաքելի արդիւնքն արդէն

ձեռք բերած պիտի լինի Բ. Գուման և արժեթղթատարաց մասնակցութեան հարգանքներն ներկայացուցին միջև ինքուան երկուստեան կարգադրութեամբ:

« Չեր վսեմութիւնը պիտի ներքինն յառաջ թէ սոյն անկեղծ բացատրութիւնը Ռուսիոյ կայսերական կառավարութեան մասն մէջ ունի կատարած մը չպիտի թողուն Բ. Գուման որոշած վերջին երկուստեան անօրէնութեանց օրինադրութեանց վրայ, և պիտի բաւեն ջնջելու այն կանխակալ կարծիքները, զորս առաջին տղաւորութիւն մը կը կրցած էր ներշնչել իրեն:

« Հաճեցէք ընդունիլ . . . »
3 մարտ 1879 ԳԱՐԱԹԵՆՏՈՐԻ

ՀՅՈՒԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ (ՀԱՎԱՍՏ)

Այս տարւոր հասած հետաքրքիր

Նորոգի 7 մարտ.
(Խաղաղութեան պայմաններէ փորձ փորձող) Բառնանթէ մահաւոր դատապարտեցաւ:

Մտորիտ 7 մարտ.
Սպանիական նոր նախարարութիւնը կազմուեցաւ:

Մարթինի Գաւառս գործարար նախարարաց խորհուրդն նախագահ և պատերազմական գործոց նախարար անուանեցաւ:

Աթէնք 7 մարտ.
Այս բացարձակապէս սուտ կը հանուի այն լուրը թէ 300 Հելլենաց խումբ մը Փանաթոյ տաճարին անցեր և Բաթալիցիներն անուն Օսմանեան զիւրն արեր է: Յիշեալ զիւրն մէջ թուրք բնակիչ բնաւ չկայ:

Մակեդոնիոյ մէջ ծագած խռովութիւններն Հելլենական արտադրաց խումբերու կողմէն զորոտած ինքեւն լուրն ալ անհիմն է:

Լոնտոն 7 մարտ.
Թայիլ լրագիրը կը ծանուցանէ թէ Սրեկեան տէրութիւնը յայտարարեւ են Բ. Գուման թէ Պաքաններու գրաւման, և ի հարկին Օսմանեան գործը Սրեկեան Բումբէլի մէջ մտնելուն վրայ պիտի սլնէ:

Կալիֆոռնիա 7 մարտ.
Էմիլ Երի Սիւն մահաւոր յետոյ, Ա. Ֆրանսուսայ մէջ արեւմտեան կոնքեր եղան: Նորոգի խանի կոնսուլցութիւնն յաղթող եղաւ:

Լուր կը պտտի թէ Ա. Ֆրանսուսայ հետ հաշտութիւն կը քուր է:

Պերլին 7 մարտ.
Գերմանական երեսփոխանութիւնն իւր պատժական իրաւունց վրայ նախարարութեան կողմէն ներկայացեալ ծրարդիրն երկրորդ ընթերցանութեամբ մերժեց, և առաջարկութիւն մ'ընդունեց, որոյ համաձայն յանձնարարութեան պիտի կազմուի երեսփոխանութեան ներքին կանոնադրին մէջ բարեփոխումներ ընելու համար, եթէ հարկ դատուի:

Փարիզ 7 մարտ.
Երեսփոխանաց Ժողովին ընդ յանձնարարութեան նախարարութեան յայտնած հաւատարմութեան չնայելով՝ մարտի 16 ի (Պոլսի-Թուրքիոյ) նախարարութեան անդամաց դատաւարներն թարիկու առաջարկութեան վրայ կը պնդէին կարծուի թէ երեսփոխանաց Ժողովը պիտի մերժէ սոյն առաջարկութիւնը:

Լոնտոն 7 մարտ.
Օսմ. Բան. 42 1/8
Փոխ. 1863 45 3/4
» 1869 45
» 1871 45 3/4
» 1872 22 3/4
» 1873 14 1/2
» Եղիպոս 69 5/8
Անգլ. Բան. 96 1/2

Փարիզ 7 մարտ.
Օսմ. Բան. 127 1/2
Գաղղ. Բան. 50/0 77,73
» » » Նոր 79,93
» » » 50/0 115, 5

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մայրաքաղաքին Անգղիական դեսպանին տեղակալ Մ. Մէյքէթ այսօր վեհ Սուլթանին պիտի ներկայանայ՝ Անգղիոյ թագուհին մէկ նամակը մատուցանելու համար, որ Քրմալը լինելի դուքսն Տանկարքայի թիւրախ լինանուհին հետ ամուսնութիւնը կը ծանուցանէ:

Կայսերական կառավարութիւնն հարկ եղած զինուորական միջոցները ձեռք առած է Մակեդոնիոյ մէջ Պուլղար հրոսակաւորութեան արշաւանաց գիւղերէն համար, Մէյքէթին, Նէվիլքոքին և Կիւմիւրիսիոյ գաւառաց մէջ 22 վաշտ զորք համախմբուած են:

Բեդրապուրէն եկած վերջին լուրեր կը ծանուցանեն թէ Աղբ. քանդոր կայսրն յառաջիկայ մարտ ամսոյ մէջ Լիւաթիա պիտի երթայ:

Լա թիւրքի լրագիրը սուտ կը հանէ Պարսկաստանի մէջ ալ Ժանտախտ երեւան եղած ինքեւն լուրը, զոր Մէյքէթը տուած էր առջի օրը: Բառնանթիոյ տեսչութեան թէհ-մանի պատուիրակ Տօքթօր Մէյքէթն ճէնէն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պարսկաստանի և ոչ մէկ կողմը Ժանտախտ չկայ այժմ:

Վաղըթ լրագիրը կը ծանուցանէ թէ Բ. Գուման Եւրոպական տէրութեանց ծանուցագիր մը լրերէն է, յայտարարելով թէ Յունաստանի կառավարութիւնը սահմանաց ուղղութեան համար վեհաժողովին յանձնարարած դէպքն բնաւ չեղիլ չուզեր, մինչքան Բ. Գուման զինուորական և քաղաքական շահեր ունի պաշտպանելու, ուստի Բ. Գուման այս խնդրոյն նկատմամբ Յունաստանի հետ համաձայնելու հնար մը չտեսներ:

Թուրքիոյ և Սերպիոյ միջև թըղթատարութեան դաշնագիր մ'առաքողութեան վրայ է:

Սթամբուլ լրագիրն իսպին նախելով արտաքին գործոց նախարար վսեմ Գարաթէօսօրի փաշան նոյն նախարարութեան պաշտօնատարաց ամսական աւելցնելու պէտք տեսնելով խնդրէ է երեսփոխանարարութեանն որ արտաքին գործոց նախարարութեան պիւլետէին վրայ յառեւած մը լինի:

Ռօստոմ օյլ իսլամ, Յոյն և Հայ բնակիչը հանրադիր մը զրկած են Բ. Գուման յայտարարելով թէ քաղաքին Յոյն եպիսկոպոսը Ռուսաց զբաւման Ժամանակ մեծ ծառայութիւններ ըրած է Ժողովրդեան՝ սուանց աղղի խտրութեան:

Բ. Գուման յիշեալ եպիսկոպոսին այս գովելին ընթացից համար Հնարհակալաց գիրքը մոյլաքաղաքին Յունաց Պատրիարքին:

Պրուսացի կը գրեն թէ նորոգի կառավար Սահման վեհի վաշան յիշեալ քաղաքն հանելուն պէս կարգադրական խիստ միջոցներ ձեռք առնէ: Առանց կանոնադրանցաթղթի նահանգին ներքեր տեղէն մ'ուրիշ տեղ ճանրորութիւնն արգելէ է: Հասարակաց ուղիներու պահպանող զբաղ և նահանգին թէ ծովազերայ և թէ ներքերը գտնուող իշխանութեանց խիստ հրամաններ զրկել է՝ հասարակային անդորրութեան անվրդով պահպանութեան:

Համար Աւերի խիստ միջոցներ ձեռք առնէ է նահանգին մէջ բնակող գաղթականաց գէմ: Սահման վեհի վաշան համադրէ է թէ այս մարդոց մէկ մեծ մասը ճանրաներն աւաղաւորութեամբ կապին: Ասոր համար՝ առանց կանոնադրանցաթղթի ու նենալու տեղէն մ'ուրիշ տեղ ճանրորութիւնը գաղթականաց արգելներ է: Գաղթականը զէնք չպիտի կրնան կրել: Այն արգելքն հակառակ վարչականութեան զէնքերը պիտի առնուին, և իրենք խիստ պատժոց պիտի ենթարկին:

Յիշեալ կառավար նաեւ քաղաքին շրջակայները բրնձի մշակութիւնն արգելէ է ողջ պահանջան պատճառներով:

Ռուսական Ֆալքայնոս գնդապետն, որ յատուկ պաշտօնով մը Կ. Պօլս եկած էր, երէկ Պուրէշ վերադառնալու համար Վարնայի շոգենաւով մայրաքաղաքն մեկնեցաւ:

Այսթէֆանոսի գաղաղութեան ստորադրութեանն ի վեր, Ռուսական բանակաւորներն Օսմանի հետ թղթատարութեանց համար յատուկ պէս Ռուսիայէն Բերայի հեռագրատունը զրկած հեռագրական պաշտօնեաց ետ կանչուելով, Աղբիա նուազօրի գնացին:

Տիմոթիքայէն եկած լուրեր կը ծանուցանեն թէ տեղւոյն Պուլսար բնակիչը Ռուսաց ետեւէն գաղթել սկսեր են:

Գանի մ'օրէն ի վեր բոլոր հասարակաց կառքերու կառավարները գործադուր ըրած են: Ասոր Կ. Պօլսոյ քաղաքապետութեան որոշած սակագնէն կը գանդատին՝ անբաւական համարելով զայն:

Բերայի փողոցներուն մէջ գիշերներն յանդուգն դուրսերէն կը շարունակեն: Անցեալ իրիկուն Ժամը 1 ին միջոցները Յոյն բժիշկ մ'Այնալը 25 չէլի փողոցէն անցած միջոցին, երկու չարագործք բժիշկին վրայ յարձակեցան դանակներով, և վրան գանդուած դրամներն ու Ժամացոյցը կորցեցին:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
Է Ս Չ Ա Մ Ր Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	13.10
Այս տարւոր բացուեցաւ	13.7
Կէս օրին	13.4

Բումբի երկրորդ	Ֆր. 47
Թող ազատ	Ֆր. 460

ԸՆԹԱՑՐ ՍՐՃԵԹՊՈՑ
Կ. Պօլս 23 փետրվար

Ստիլթ Լէնկալի բաժ. Անգլ. իւր.	4.23
» փոխաւորութեան	3.25
Կ. Պօլսոյ Պաշտպան	6.13
Ֆր. Կ. Լէնկալ	5.15
Փոխ. 1863	76
» 1865	78
» 1869	76
» 1872	23 50
» 1873	72

Թրամայ Օսմ. իւր. 4.75

ԸՆԹԱՑՐ ԳՐԱՄՈՑ
24 փետրվար

Անգլ. իւր.	գր. 109 13
Նորոգի տիւր	87 12
Խմբի իւր Ռուս	89 20
Գրքի միջ	51 10
Մէճիկի տարբերութիւն	7
Հիւղնոց	125
Պրիւն	180

Օսմ. կայսերական Պաշտօն այսօր 420 զրէ գին որոշած է թղթ տղաւոր փոխաւորութեան:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ս.

Երեկ ազգային ժողովը դու մարե-
ցաւ առ ժամանակեայ նախագահու-
թեամբ իրավունքն Գեորգ Մարտիրոս
եպիսկոպոսի և տառնապետութեամբ
Վսեմ. Ստեփան վաչաղի Ստրանկան:

Դամ 7ին տառնապետութեան ժողովը
միասնական գործողութիւններէ ե-
տեւ Ս. Պատրիարք Զոր մէկ զիրը կար-
գացուեցաւ որով Ն. Սթրանկանութիւ-
նը կը պահէր իւր հրաժարականին վը-
րայ և կառավարիչը որ եթէ անցաւ
պաղ Ազգային ժողովը նոր Պատրի-
արքի մը ընտրութիւն կատարել չու-
ղէ, զո՞նք Պատրիարքական տեղա-
պահ մը կամ փոխտեղապար մը կը
որոշէր և վարչական գործող ներկայ
տարտամ վիճակը վերջ գտնէ:

Սոյն առաջարկութիւնը խառն
ժողովն ալ կրկնած լինելով, Ազգ.
ժողովն, յետ բաւական վիճարանու-
թեան որոշեց՝ առանց Ս. Պատրիարք
Հօր հրաժարականն ընդունելու՝ ե-
պիսկոպոս մը փոխտեղապար կարգել և
տրտնութիւն տալ անոր պատրիար-
քական իշխանութեան ընթացիկ գոր-
ծերը կատարելու: Ս. Պատրիարք
Հօր վերապահելով ազգային փափուկ
և ամենակարեւոր գործող անօրէնու-
թիւնը:

Սոյն ընտրութիւնն Ազգային ժո-
ղովը պիտի ընէ իւր յառաջիկայ նըս-
տին մէջ, որ 8 օրէն պիտի գումարի:

ԹԳԹԱՅՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Գար-բերդ 3 փետր 1879.

... Տէր:

Ձեր պատուական Մատիս հանա-
պօղոթեայ ըլլալուն, կու գեմ ընթեր-
ցողացդ երկար երկար տեղեկութիւն-
ներ տալ:

Քրիկն եկած լուրերն ուտելաց
նուազութեան գաւառին սովի ըս-
պառնալեաց ներքեւ ըլլալը և ցարդ
գարդիներու և ազգային բարեկար-
գութեան ձեռնարկութիւն մը չըլ-
լալը կը ծանուցանեն: օր մը Գեորգ
գերէ գանգաւ, օր մը տեղացի պէ-
յերէ, օր մը կառավարութեան պաշ-
տօնատարներէ, օր մը սղութեանէ,
օր մը սովէ, հետեւաբար թշուառու-
թեանէ ի թշուառութիւն կը գլորին
առանց գիտնալու թէ բոլորին պատ-
ճառն իրենց ազդեցութիւնն է, իրենց
անհոգութիւնն է, իրենց անմիաբա-
նութիւնն է, իրենց անձնապաշտ-
ութիւնն է: ուստի ինչպէս բերանացի
նայեալ և գրաւոր խորհուրդներ
տուի իրենց թէ պէտք է օր յառաջ
գարդիներու բարեկարգութեան
ձեռնարկեն, և ամեն ոք իր շահուն
պէս ազգին շահերը պաշտպանէ որ-
պէս զի թշուառութեանէ իսպառ ա-
զատին:

Բաւուցիք Նաթանեանի * վէճե-
րով դժգոհալ, իրենց այն եղական
փանքը (Գաղղոսայեաց Ս. Աստուա-
ծածին), իրենց մանչ և աղջիկ դա-
ւաններն երեսն վրայ թողուցած են:
Գիտնալու են մեր Բաւուցի ազգայինը
որ սնտրի վէճերով ժամանակ վառ-
նելն իրենց կենսական շահերուն կը
ֆուտէ: ուստի պէտք է օր յառաջ
ոթնափին, յանուն գարդիաց և յա-
նուն վանքին ընկերութիւն մը կազ-
մեն, միաբան և միասիրտ աշխատին,
գործեն և ներկայ տարտամ վիճակէն
տղաւթին:

Զաւրանալիք քաղաքին գարդի
յետադէմ, ազգային վարժարան
չունին, երբեք աշխատող չըլլայ, ա-
մենքն ալ Պոլսոյ ընկերութեանն և ա-

* Զարմանալիք է որ Վարչութիւնն այդ
փախուկն քննութեան կամ փոխ առաջ-
նորութեան պէս փափուկ ու կարեւոր
պարտօններ կը յանձնէ ու գաւառները
կը զրկէ:

ուսմանը քաղաքնաւոր տնկած
կը քննանան, առանց իրենց բոլորի
վէճ գիտնալուն նայելով գէթ ա-
նոնցմէ ամենալու, որ քաղաքէն ա-
ւելի պայծառ եկեղեցիներ ու գար-
դիներ ունին: Միւսից Պոլսէն նշանա-
գաւով գարդի չի պահուիր, պէտք է
իրենք ալ օգնեն միաբանութեամբ:

Զարմանալիք 60 հայտնակ գիւ-
ղերուն մէջ բնաւ գարդի մը չը կայ,
միայն կեղերուն՝ ուր 500 տուն բնա-
կէջ կայ, գարդի մը ունի և մէկ վար-
ժարան մը 8 ոսկի տարեկանով: Ա-
ստիք իրենց կառավարական հին խն-
դիրը պատճառ կը բռնեն: երբեք
չեն գիտեր խեղճերը թէ կալուա-
ծական խնդիրը գարդիի հետ յարա-
բերութիւն չունի: այդ խնդիրը աշ-
րութեան պղծար օրինաց համաձայն
անշուշտ պիտոյր լուծուի: և եթէ
չատ տարիներ առկա մնայած է,
յսնայանք քիչ մը տեղական պաշ-
տօնէից, մեծ մասն ալ իրենց ազգի-
տու թեման վրայ կը մնայ: Այս գա-
ւառի ժողովուրդը վերջելեալ գա-
ւառներէն աւելի ընդունակութիւն
ունի: եթէ համազօր ըլլայ, ամեն
գիւղ գարդի կ'ունենայ, բայց ազգու-
միջոցի մը կարտաթիւնն ունի, և
այն ալ քիչ աշխատանքով կ'ըլլայ:
Ի՞նչ օգուտ որ գործող չունիմք:

Տօրոս լեւան Հայկեն, որ վերո-
յիշեալ գաւառներուն ամենէն աւելի
ճշեալ և յետաւանց են, դարմանա-
լի ընդունակութիւն մը ունին, այն-
պէս որ քիչ աշխատանքով երեք
գիւղի մէջ գարդի ունեցան, թէ և
միտակ հասարակ ընթերցման: Այս
գաւառը չընկալաւ գաւառներէն շատ
պիտոյր լուսաւոր շնորհիւ Ամեն Ս.
Պատրիարք Հօր և Արարտեան բազ-
մաբլիւն ընկերութեան:

Ուստի ուրախ սրտիւ կու գամ
Մատիսի միջոցաւ աւելեւ մերապնէից
թէ Տէրօրիմ հայաբնակ գիւղերու
մէջ ուսման ծաւալումն ինչեալ ըն-
կերութիւնն ստանձնած և ըստ այնմ
նախապատրաստութեան սկսած է:
Այս տեղի ժողովուրդն, որ 3-4 գա-
րդիէ ի վեր Գրդերու բարբարոսու-
թեան ներքեւ ճշեալ է, գարձեալ
պահած է իր եկեղեցւոյ բոլոր ա-
ւանդութիւնները, մայրենի լեզուն,
Արարտեան հիւրասիրութիւնն, և
նահապետական կեանքը: իրենց բո-
լոր գրեաններն իրենց ձեռնադրծ-
ներն են: բամբակը կը մշակեն, կը
մանեն, կը ներկեն, կառաւ տարազ
կը գործեն, իրենց և կամանք ու տը-
ղայաց գրեանները, անկողիններն և
այլ պէտքերը կը հագան: իրենց սը-
նուցած ոչխարներուն ու այծերուն
բուրդերէն իրենց գլխարկ, կապայ
և այլն կը շինեն: իրենց սնուցած կո-
վերուն ու եղներուն ձերութիւնը
մարմելով և պարարտները մատաղ ը-
նելով կաշիներն իրենց սաքերուն
կոշիկ կը շինեն և արօրի շղթայներ
կը կարեն: իսկ շատերը բնական կօ-
շիկ կը հագնին, այսինքն բոլորի կը
քալեն: Հոս չեմ կրնար մոռնալ այն
մատաղ տղայաց բնակի ոտքով սա-
ռուցի վրայ խաղ խաղալը, որոյ վրայ
միտակ կառաւ շապիկ մը մինչև ծուն-
կերը ծածկած ուրիշ ոչինչ չունին հա-
գած, և այսպէս ձմրան սաստիկ ցուր-
տին ստույցին մէկ ծայրէն միւս ծայ-
րը կը սողան ու կուրախանան: Գի-
տեմ որ Պոլսեցիք չեն ուզեր հաւա-
տալ այս ըսածին, բայց շատերէ և
չատ տեղեր տեսնուած է, և ամենէն
դարմանալին այն է որ շատ քա-
ղաքող են: նաեւ այր և կին առողջ
և: բնականաբար գեղեցիկ են:
իրենց արտերէն կը հանեն ցորեան,
գարի, սոս, սիսեւ, չուշմա (սուսամ),
ֆիկ, և այլն, և տարաւորներուն մէջ

քանի մը տեսակ կանաչեղեն և այ-
դ ինքեղեն ընտիր խաղող, որոյ գինին
կիսաբոսի գինէն աւելի արժէք է:
Իրենց ուտելիքն է ցորենի գարի
կըկըլի և կորեկի հաց, լուրջալով
և քանի մը խոտով ու խղով բնական
կիսաբոսիներ: Կին մը ամուսնանալէն
30 տարի վերջը միայն կրնայ իր կէս-
րայրին կետաւրին և տագրին հետ
խօսիլ: 30 տարի շարունակ անխօս
պիտոյր մնայ որ այս կողմերը մունջ
կընեն: Երեւելը կաշխատին արտերու
այդ ինքեղեն և տուններու մէջ, կիներ-
ը կը բերեն տանը պէտք եղած ջու-
րը, կալերուն խոտը և ինչ կիները կը
մաքեն անոռները, կը կթեն կաթ-
նատու կենդանիները, կաթը մածուն
և իւղ կը շինեն, նոր հարներն աւե-
լի պէտք է աշխատեն կիներէն, փաք-
րիկ տղայքը գաւառները կարծեն, պա-
տանները ոչխարները, իսկ երիտա-
սարդները կալերն ու եղները: Շատ
տուններու մէջ չորս հինգ վեց եղ-
բարք ամուսնայեալ և դաւաններու
տէր միաբան կը մնան, բաժնուիլը
մեծ մեղք և ամբթ կը համարին: ե-
րեկոյ և առաւօտ եկեղեցի կերթան
պահքերն ու ծովերն անթերի կը
պահեն, կիւրակէ և տօնի օրերը եր-
բէք շեն աշխատիր, և Առաջաւորաց
պահքին շարժուն կենդանիներուն
իսկ ծով պահել կուտան: Այլերն
յաղմանգամ ուժեղ և առողջ են,
կանայք գեղեցիկ և սուր աչքերով,
ցարդ կը փայլի իրենց վրայ հայկա-
կան քաջութիւնը: իսկ Գեորգերէն
սոված են շատ մը սուտ խօսիլ, և
կերպ կերպ անկրաւութիւններ: օ-
րինակի համար, այր մը մեռած օրը,
դեռ նմեցեալ չը վերցուցած, ու-
րիշ այր մը կերթայ պէյի մը՝ կամ
աղայի մը հինգ ոսկի տալով մեռեա-
լին կինը բռնութեամբ կը քաշէ կը
տանի և նորա հետ կամուսնանայ,
և որ առաւել է, ազգականը, իւր-
նամին, եղբօր կինը, քեռիկն աղջիկը
առնողներ և երկու կին ունեցողներ
ալ լսեցի և տեսի: Եւ այս ամեն գեղ-
ծունեքը կը գործեն իրենց Տէր պա-
պային օրհնութեամբն և պատի խոր-
հորդալ Գահանաներն ալ չափազանց
աղէտ են: ցուալի վիճակ, Հարա-
նիքը դարձին կընեն Գրդաց եր-
կիւղէն: Այս տարի՝ որ քիչ մը ա-
զատութիւն գտան, արդէն սիրահար
ըլլալով թմբուկի և պարերու, 16 օր
տեւեց հարսանեայ հանգէսները: փե-
սայն հաղուեցընելու ատենը անոռը
կը պահեն, յետոյ քանի մ'երիտա-
սարդներ զայն վնասուելու կ'ըլլեն
զէնքերով ու բիւրերով: Փեսայ գո-
վելը և ծառ շինելը խիստ հետա-
քըրքալան էր, բայց մանրամասն
նկարագրելու թէ միջոց չունիմ և
թէ ընթերցողք կը ձանձրանան: Կըն-
քահայրը սուր մը ի ձեռնին փեսային
քովէն կ'երթայ թէ՛ յեկեղեցի և թէ՛
ի տուն: իսկ փեսան անխօս և բեր-
նին վրայ թաշկինակ մը կը դնէ մին-
չև 15 օր, հարսը՝ ինչպէս արդէն ը-
սինք: 40 տարին պիտոյր համբէ:

Քիչ մ'ալ առնեց գրացի քուրդե-
բուն վրայ խօսիլ կուզեմ:

Թաւրի Լաւ:

Գահութեամբ կը ծանուցանեմք
թէ Մեծ Տիգրան էֆենտի կիւմուշ-
կերտանեան հետեւեալ գիրքերը նը-
ւերեց թէհրանի նորահաստատ ըն-
թերցարանին:

- 3 հատ Յիսուսի Վերջին Շարաթ
- 1 » Դրախտի Ընտանիք
- 1 » ՄարգարիտաՎերայութեան Երկերից
- 1 » Սիրաք և Սամուէլ
- 1 » Մանանայ
- 1 » Ծառան Շաւարշանայ
- 1 » Վարդանի մը կոյծեր

- 1 » Գրոց ու Բրոց
- 1 » Պանդուխտ Վանդիկ
- 2 հատ Եկեղեցիք
- 1 հատ Անթոնի
- 1 » Կրօնիկ
- 1 » Գէորգ Աւաղիկըն
- 1 » Մերգա և Սնոս
- 1 » Հանապարհորդութիւն ի Մայր
- Սթան Սրարաւեան
- 1 » Ամուրի մը երազները
- 1 » Ռաֆայէլ
- 1 » Ճերմակ Վարդը
- 1 » Հանապարհորդութիւն ի Բարիկոն
- 1 » Բեկառգիրը Հայաստանեայց
- 1 » Իմպէա Կալուա
- 1 » Թէ ի՞նչ շահեցանք Պէրիկի վե-
հաժողովէն

27 հատ

... Խմբագիր:

Գալոցասիրաց-Արեւելեան ընկե-
րութեան Տնօրէն խորհուրդը պատիւ
ունի ծանուցանել թէ որոշած է Հա-
յաստանի քաղաքաց ուսումնարան-
ներուն նուիրել 300 օրինակ ընդար-
ձակ աշխարհագրութեան մատեն
դին 1 մէճիտ, աշխատասիրութիւն
Պ. Պ. Աղանուրեանի ի պէտս զար-
դացելոյ:

Ուստի կը խնդրենք որ ուսումնա-
րանաց հոգաբարձութիւնք ուղղակի
և կամ իրենց Պոլսեցի ներկայացու-
ցիչներուն ձեռօք բարեհաճին, ի
գիւրութիւն Տնօրէն խորհրդոյս, բա-
նակցութեան մասնէ իրեն հետ:

Տնօրէն խորհրդոյ սենեակը, Ղա-
լաթի, Սառնիկի խան, բաց է ա-
մեն հինգշաբթի և շաբաթ երեկոյ
ժամը 10էն ց11 և կէս:

Հաճեցէք: Տէր, հրատարակել
այս ազգը ձեր ազգօգուտ թերթին
մէջ ութ օր շարունակ, և ընդունել
մեր կանխաւ շնորհակալութիւնը:

Ի գիտաց Տնօրէն խորհրդոյ
Ատենագիրը Ատենագրեա
Թ. Շահապէս Ս. Տաւրիան

Ա. Զ. Դ.

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թէ և ընկերութեան ամեն անգա-
մայ ըստ սովորութեան յատուկ հը-
րաւիրագիր զրկուած է ընդհանուր
ժողովոյ գիտանի կողմանէ, սակայն
այս անգամ հարկ կը համարեմք ծա-
նուցանել լրագրաց միջոցաւ որ ընդ-
հանաւ ժողովոյ նիստը տեղի պիտի
ունենայ յառաջիկայ կիրակի, 23
փետրուար, Ղալաթի կեղերական
վարժարանին մէջ: Նիստը երկու մա-
սի բաժնուած է, առաւօտեան և ե-
րեկոյեան: Առաւօտեան նիստը ժամը
3 ին կ'սկսի և կը աւել մինչև վեց:
Իսկ երեկոյեան նիստը ժամը 7էն մին-
չև երեկոյ:

Հրաւիրեալ են ամենայն անդամք
ճիշդ որոշեալ ժամուն ներկայ գրա-
նուիլ:

Ի Լ Ա Ն

Նիգամիյէ սարաճանէ վէ գալէվ-
րահանէ անպարարը իշուն շուրու-
թը մալիւմէ իւր միւսպետա խորիճե-
կի էվվէճէ իւրան գըլընան րէվէն-
տուդ պեղինին պէհէր արշունու իքի
զրուշ օն պէշ փարայա թալիսի Էօհ-
տէսինաէ գալմշ վէ գարարը տա-
լի վէրիլիշ օրմալէշ շուպալը բու-
մինին երկիրի սօրօրիւնճիւ ճուճա
իրթէսի կիւնիւ ազշամա դատար ու-
սուլու վէճհէ երեւոյ պէշ թէնդիլի-
նէ թալիս օլանարըն Տարի Շալայի
ասքէրլիյէ կէլվէլիլի:

22 շուպաթ 1878
Պապը Սէրափէլի

ՏՓԹԻՍ. Պ. Ներկողայոս Տ. Ղևոնդեան: